


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

## Յիսուս կոյր մը առողջացուց:



Written by: Edward Hughes  
Illustrated by: Alastair Paterson; Janie Forest  
Adapted by: Ruth Klassen  
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
dedicated to my Son Lordling Zareh Varant  
funded by: Zareh Seropian & Sons Foundation  
special thanks: to my wife  
gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.  
Produced by: Bible for Children  
[www.M1914.org](http://www.M1914.org)

BFC  
PO Box 3  
Winnipeg, MB R3C 2G1  
Canada

©2020 Bible for Children, Inc.  
License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.


1

Պարդիմաոս կոյր մարդ մըն էր: Ճերիքոյի ճամբուն  
եզերքը կը նստեր: Կը մուրար: Բարերարներ իբրեւ  
պզտիկ գումար քիչ մը ուտելիք կու տային:  
Պարդիմաոս չէր կրնար աշխատիլ, որովհետեւ  
չէր տեսներ: Ան միայն կրնար մուրալ:




2

Օրին մեկը, ճամբան խճողուած էր: Պարդիմանս շատ ոտքերու ձայն լսեց: Տարօրինակ բան մը կը պատահէր: Շուտով կոյր մարդը գիտցաւ ինչ կայ: Նազարէթի Յիսուսը քաղաք եկած էր: Բազմութիւնը հաւաքուած էր տեսնելու Յիսուսը եւ Իրան լսելու:



3

"Յիսուս, Դաւիթի որդի, գթայ ինձի": Ինչո՞ւ Պարդիմանս կը պոռար: Ինչո՞ւ կը կարծէր, որ Յիսուս կրնայ օգնել իրեն: Թերեւս լսած էր ուրիշներէն, թէ Յիսուս կ'առողջացներ: Շատեր խուլ, շատեր համր, շատեր կաղ եւ շատեր կոյր, ինչպէս ինք: "Դաւիթի որդի, գթայ ինձի": Պոռաց Պարդիմանս նորէն ու նորէն: Իր ձայնը յոյսով հնչեց:




4

Պարդիմանս մէկ բանէ վստահ էր: Եթէ հիմա օգնութիւն պիտի չստանար թերեւս նորէն չէր կրնար առիթ ունենալ: Յիսուս նորէն նոյն տեղէն չէր անցներ:




5

Պարդիմանս Յիսուսի պէտք էր հասներ: Բայց ժողովուրդը չէր շարժեր "Սաաաահիհ" կ'ըսէին: Անոնք անոր ազդարարեցին, որ լուռ մնայ:




6

Բայց Պարդիմանս չլսեց: Շարունակեց ճչալ: Յանկարծ Յիսուս կանգ առաւ: Լսեց: Հրամայեց, որ կոյր մարդը քովը բերին: "Ուրախ եղիր", ըսաւ ժողովուրդը Պարդիմանոսի. "Ոտքի ել: Ան քեզի կը կանչէ":




7

Մէկ կողմ նետելով իր վրայի վերարկուն, Պարդիմանս ոտքի ելաւ եւ Յիսուսի քով գնաց:



8

"Ի՞նչ կ'ուզես, որ ես քեզի ընեմ",  
հարցուց Յիսուս: Ինչպես կրևար  
պատասխանած ըլլալ: Կրևայի՞ր  
պահանջել շատ դրամ եւ նոր  
գեղեցիկ հագուստ: Ատո՞նք էին,  
որ Պարդիմանս կ'ուզէր:




9

Ո՛չ, կոյր Պարդիմանս Յիսուսէն ոսկի կամ գեղեցիկ  
հագուստներ չուզեց: Գիտե՛ս ան ինչ պահանջեց:  
"Տէր, կ'ուզեմ տեսողութիւնս ետ դառնայ":




10

Պարդիմանս տեսնել կ'ուզէր: Տեսնել  
ծառերը եւ թռչունները եւ ամբողջ Աստուծոյ  
ստեղծագործութիւնը: Ան կ'ուզէր տեսնել,  
որպէսզի ինքզինքին հոգ տանի եւ  
մուրացկանութիւն չ'ընէ:



11

Յետոյ Յիսուս ըսաւ Պարդիմանսի. "Ստացիր քու  
տեսողութիւնդ: Բու հաւատքդ քեզ փրկեց":



12

Անմիջապէս ան իր  
տեսողութիւնը  
ստացաւ եւ  
Յիսուսին  
հետեւեցաւ:  
Ամէն ինչ  
կրևար ըսել:  
"Աստուած  
հրաշալի  
է: Ան ինձ  
առողջացուց":  
Հրաշալի  
վայրկեան մըն էր  
Պարդիմանսին  
համար:



13

Ամէն ժողովուրդը, երբ  
տեսան ասիկա, փառք  
տուին Աստուծոյ: Անգամ  
մը եւս, անոնք տեսան  
Աստուծոյ որդիին  
հրաշալի ուժը, Յիսուս,  
ետ դարձուց այդ խեղճ  
կոյր մուրացկանիք  
տեսողութիւնը:



14

Յիսուս կոյր մը առողջացուց:


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մարկոս 10, Ղուկասու 18, Յովհաննու 9

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

15



50

60

16

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր  
հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ,  
որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզ  
կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան  
մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի  
հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը  
Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը  
հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներք  
քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեզդ  
կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր  
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար  
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ  
կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի  
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարոյ՞ս Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

17